ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ն 193 - Ա
25 հոկտեմբերի 2013 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից 155.000 /մեկ հարյուր հիսունհինգ հազար/ դրամ հատկացնել ս/թ հոկտեմբերի 25-26-ը Լոռու մարզի Վանաձոր քաղաքում անցկացվելիք 2012-2013 թվականների <<Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի գավաթի>> խաղարկության 4-րդ եզրափակիչ փուլի մրցումներին մարզային թիմի մասնակցությունն ապահովելու նպատակով միասնական համազգեստ, մարզակոշիկ ձեռք բերելու և ճանապարհածախսը հոգալու համար՝ համաձայն նախահաշվի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ Համբարձում Սաֆարյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
պարոն Ռ. Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 15.10.2013թ. N 01/15.2/12217-13 գրության՝ 2013 թվականի հոկտեմբերի 25-26-ը Լոռու մարզի Վանաձոր քաղաքում տեղի կունենա 2012-2013 թթ <<Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գավաթ>> խաղարկության IV-րդ եզրափակիչ փուլի մրցումները, որին պետք է մասնակցեն ՀՀ Գեղարքունիքի մարզային փուլում հաղթած Գավառի N5 հիմնական դպրոցի 4-րդ, 5-րդ և 6-րդ դասարանների թիմերը: Յուրաքանչյուր մարզ պետք է հանդես գա միասնական համազգեստով:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ֆինանսական միջոցներ տրամադրելու՝ մարզը ներկայացնող թիմերին միասնական համազգեստ և մարզակոշիկ ձեռք բերելու, ինչպես նաև ճանապարհածախսը հոգալու համար՝ համաձայն ստորև ներկայացվող նախահաշվի.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մասնակիցների թիվը՝ 12 աշակերտ
2 մարզիչ
1 ներկայացուցիչ

Ճանապարհածախս - 50 000 / հիսուն հազար/ դրամ
Մարզական համազգեստ – 15 x 5000=75 000 /յոթանասունհինգ հազար/ դրամ
Մարզակոշիկ 12 x 2500 = 30 000 /երեսուն հազար/ դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 155 000 /հարյուր հիսունհինգ հազար/ դրամ

Կրթության, մշակույթի և սպորտի
վարչության պետ՝ Գ.Բաղդասյան

Գեղարքունիքի մարզպետարան
ՆԱԽԱԳԾԻՐ ԹՎԱԿԱՆ
Մուտքագրված՝ 6905-13
«23» 10 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, հեռ./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

N 04/ԱՀ/2017-13 «15» 10 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Հայտնում եմ Ձեզ, որ 2012-2013 թթ <<Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գավաթի>> խաղարկության IV-րդ եզրափակիչ փուլի մրցումները, որին կմասնակցեն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 4-րդ, 5-րդ, և 6–րդ դասարանների մարզային փուլում հաղթած դպրոցականները, տեղի կունենան ա.թ. հոկտեմբերի 25-26-ը Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

Ընդունելության օրը հոկտեմբերի 25-ին, ժամը 12.00.-ին: Ճանապարհածախսը հոգում է գործուղող կազմակերպությունը:

Մրցումների եզրափակիչ փուլի հայտերը /արձանագրություն, անհատական քարտ բժշկի թույլտվությամբ՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից/ ներկայացվում են մրցումների նախօրյակին <<Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա>> հասարակական կազմակերպություն, հասցե՝ ք.Երևան, Ագաթանգեղոսի 13, հեռախոս՝ 52-94-00, 52-13-17:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Կատ.Լ. Սարգսյան
Հեռ.՝ 54-70-25.